



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 1412
Դեկտեմբեր 18, 1956

Հոգեշնորհ
Տ. Սուքիաս Վրդ. Գալթայեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Տարուծիւն Եկեղեցւոյ
Ս. Միլվուօի.

Սիրելի Հայր Սուքիաս,

Այսու ներկայ Ձեզի կը դրկենք Միական տեղեկագրութեան ձեւերէն երկու օրինակ: Կը յանձնարարենք որ Ձեր Միական ժողովին գումարումէն անմիջապէս ետքը այս տեղեկագիրը անթերի կերպով լեցնելով մէկ օրինակը իսկոյն դրկէք Առաջնորդարանս, իսկ միւս օրինակը պահէք Ձեր թղթածրարին մէջ:

Տեղեկագրին պէտք է կցել նաեւ ընտրութեանց արդիւնքը Հաստատող Թուղթ մը, ուր նշանակուած ըլլալ թէ քանի անդամներ մասնակցած են ժողովին եւ իւրաքանչիւր ընտրեալ քանի քուէ ստացած է: Տեղեկագիրը պէտք է ստորագրած ըլլան Միական ժողովի նախագահը, ատենապետն ու ատենադպիրը, նոյն պէս նաեւ հովիւն ու Միական Խորհուրդի դիւանի ատենապետն ու ատենադպիրը:

Տեղեկագրին պէտք է որ կցուած ըլլալ նաեւ Միական Խորհուրդի եւ ենթակայ մարմիններու տարեկան գործունէութեանց ամփոփ տեղեկագիրը որպէսզի կարելի ըլլալ զայն հրատարակել "Հայաստանեայց Եկեղեցի" պաշտօնաթերթին մէջ հերթական կարգով:

Հաճեցէք կարեւորութեամբ գործադրել սոյն հրահանգները:

Մնամք ողջունիւ սիրոյ
Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի